

Տ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՄԻ ԽՈՒՄԲ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ
Փ Ո Ր Զ*

Վերջին շրջանում լեզվաբանների ուշադրությունը անվան հետ կապված խնդիրների նկատմամբ հանգեցրեց այն բանին, որ լեզվաբանությունը իր կառուցվածքային և իմաստային վերլուծության մեթոդներով նպաստեց անունադիտության ինքնուրույն գիտակարգ դառնալուն։ Վերջինիս, քննարկվող նյութի առանձնահատկությունների բերումով, հատուկ է ուսումնասիրության կոմպլեքսայնությունը, ուր գերակշռող լեզվաբանական տարրն է ոչ միայն այն պատճառով, որ յուրաքանչյուր հատուկ անուն նախ և առաջ բառ է, այլև այն պատճառով, որ յուրաքանչյուր անվան վերաբերյալ ինֆորմացիան ձեռք է բերվում գլխավորապես լեզվաբանական միջոցների օգնությամբ։ Սակայն, այս ամենով հանդերձ, անունագիտությունը ամբողջությամբ չի տեղավորվում լեզվաբանության մեջ և դուրս է գալիս նրա սահմաններից ի հաշիվ արտալեզվաբանական տարրերի և հաճախ լեզվական վերլուծությունը հանգեցնում է ոչ լեզվական տեղեկությունների։ Ազգանունները անձնանունների ընդհանուր շարքում (անուն, հայրանուն և մականուն) առանձնահատուկ տեղ են զբաղեցնում, քանի որ նախ, ըստ ժամանակի ազգանունները այդ շղթայի վերջին՝ ամենաբարդ օղակն են և ապա, թերևս և այդ պատճառով, իրենց հիմքում ունեն վերը նշված բոլոր միավորները։ Սակայն դրանք գլխավոր, բայց միակ աղբյուրը չեն եղել ազգանունների կազմման համար։ Այդ աղբյուրների թվում պետք է նշվեն նաև տեղանունները, զբաղմունքի անունները։

Հայոց ազգանունների բուն ուսումնասիրությանը, որին ձեռնամուխ ենք եղել, պետք է նախորդի, ըստ հնարավորին, բոլոր իրողությունները հաշվի առնող դասակարգում։ Բայց նախ մի քանի խոսք ուսումնասիրվող նյութի մասին։ Բառացանկը ընդգրկում է ավելի քան 10 հազար

* Զեկուցվել է Անդրկովկասի լեզուների զարգացման և փոխհարաբերությունների հարցերին նվիրված կոնֆերանսում (Երևան, 1977, սեպտեմբեր)։

միավոր. այն անընդհատ համալրվում և մշակվում է, ըստ որում նյութը բաղվել է միայն և միայն ղանազան կարգի պաշտոնական աղբյուրներից, բացառելու համար, հատկապես, գեղարվեստական գրականության մեջ հանդիպող ինքնաստեղծ ազգանունների թափանցումը բառացանկ, նախնական դասակարգմամբ ստացվել են մի քանի խմբեր, իսկ վերջիններիս ներսում ենթախմբեր և այլն: Եվ քանի որ, ինչպես վերը նշվեց, ազգանվանը նախորդել է որևէ անուն, այն է՝ անձնանուն, տեղանուն, զբաղմունքի անուն, մականուն և այլն կամ այլ կերպ՝ նշվածները ծառայել են ազգանվանաստեղծման ընթացքին, ուստի անհրաժեշտ է նախ վերհանել այն ուղին, որ անցել է նրանցից յուրաքանչյուրը ազգանուն դառնալու ճանապարհին: Այսպես՝ անձնանունից ազգանվան անցման ուղին ներկայանում է հետևյալ փուլերով՝

Սարգիս—որդի Սարգսի—Սարգսենց —Սարգսյանց —Սարգսյան:

Վերին՝ յաճ—ով ձևը ազգանվան արժեք ստացել ազգանվանաստեղծման ավելի ուշ շրջանում: Ավելի վաղ շրջանում այն գործածվում էր հայրանունը նշելու համար, իսկ բուն ազգանվան համար կիրառվում էր —յաճց—ով ձևը: Այլ կերպ ասած՝ անցյալ դարի 30—40-ական թվականներից սկսած և ընդհուպ մինչև դարի վերջերը ընդունված էր հետևյալ կաղապարը՝ Հովհաննես Սարգսյան Պետրոսյանց, Տեղանունից ազգանվանակերտման դեպքում անցման փուլերը ավելի քիչ են՝

Աստապատ —ցի— Աստապատցոնց —Աստապատյան

Բասեն —ցի —Բասենցոնց —Բասենցյան

Խակ —ցի— Խակցոնց —Խակցյան և այլն:

Ձանաղան վավերագրեր ու պաշտոնական փաստաթղթեր ուսումնասիրելիս նկատել ենք, որ տեղանուններից ստեղծված ազգանուններում —յաճց ածանցով կազմություններ չկան: Այս երևույթը հակված ենք բացատրել հետևյալ պատճառներով՝

1. Այս կարգի ազգանունները համեմատաբար նոր կազմություններ են և, հետևաբար, չեն անցել —յաճց— յաճ բնական ուղին:

2. Մյուս կողմից ազդել է զուտ լեզվական, ավելի շուտ հնչյունական գործոնը՝ լեզուն այնպիսի հաճախական բառերում, ինչպիսիք ազգանուններն են, երկու ց—ի կուտակում թույլ չէր տա, այնպես, ինչպես հենց նույն տեղանվանական ծագում ունեցող ազգանուններում —ցի ածանցի ի—ն յ կիսաձայնից առաջ օրինաչափորեն ընկել է: Այլ կերպ ասած, տեղանվանական ծագում ունեցող ազգանունների նախնական՝ անհնչյունափոխ ձևերը պետք է համարել Աստապատցիյանց, Բասենցիյանց, Ղազախցիյանց և այլն, սակայն ժամանակի ընթացքում լեզուն այդ ձևերը հանգեցրել է ներկայիս ընդունված ձևերին:

Զբաղմունքի անունից ծագած և մականվանական ծագում ունեցող ազգանուններում ազգանվանաստեղծումը ընթացել է հետևյալ կերպ՝ գուգ, ճակատ- դուգճակատ- գուգճակատ Պետրոս -ենց-յան, արծաթ, գործ արծաթագործ Արծաթագործ Պետրոս -ենց-յան կամ աժդահա-Աժդահա Պետրոս -աժդահարենց -յան:

Ինչպես տեսնում ենք, վերը նշված յուրաքանչյուր ընթացք բավական ինքնատիպ է և, որ կարևոր է, յուրաքանչյուր խմբից ստեղծված ազգանունների ծագումը բացատրելու համար պետք է անդրադառնալ այս ընթացքի տարբեր փուլերին: Եվ, եթե անձնանուններից և տեղանուններից ծագած ազգանունները ստուգաբանելիս վիճակը որոշակի է, ապա մյուս խմբերի դեպքում բավականին մեծ է արտալեզվարանական, հաճախ նման աշխատանքների համար անհարկի տեղեկություններին դիմելու պայթակղությունը:

Ասվածը կարելի է լուսաբանել զբաղմունքի անվան հետ կապված ազգանունների օրինակով: Այս խմբի ազգանունները բավականին հեշտությամբ են տարբերվում, քանի որ մեծ մասամբ ունեն իրենց հատուկ ցուցիչները՝ գործ և շի (-ճի,-շի) ածանցները՝ Օր.՝ Արծաթագործյան, Խաղաղործյան, Ղուլումչյան, Դոնդուրմաշյան, Դեմիրճյան, Էթմեբչյան և այլն: Արդ, եթե վերոհիշյալ խմբի յուրաքանչյուր ազգանուն քննարկելիս անդրադառնանք նաև հիշված շղթայի առաջին բաղադրիչին, այն է՝ նրանց հիմքում ընկած հասարակ անվանը, ապա դժվար չէ նկատել, որ ենթարկված կլինենք վերը նշված վտանգին, չնայած այդպիսի էքստրակուրսներ կատարելու որոշ անհրաժեշտություն, այնուամենայնիվ, դացվում է:

Ելնելով ուսումնասիրության բնույթից, թույլ կտանք քննարկվող նյութի արտալեզվաբանական որոշ մեկնաբանություններ:

Մականվանական ծագում ունեցող ազգանունները կապվել են կրողի արտաքին, ներքին որևէ դրական կամ բացասական առանձնահատկության, ինչպես նաև նրա սոցիալական վիճակի հետ: Ամենից առաջ այս խմբի մեջ մտնող ազգանուններում նկատվում են հոմանշային շարքեր, ուր շարքի անդամներ կարող են լինել ինչպես գրական, բարբառային, այնպես էլ այլալեզու բառեր: Ըստ որում նրանք կարող են հանդես գալ և հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակներով՝ Աժդահարյան, Էժդահարյան-Էժդարյան, Ազնաուրյան, Երկանյան -Երգենյան — Երգանյան — Խոշորյան — Գրձելյան - Մաղալյան - Ուզունյան, Կուճուրյան - Պուճուրյան, Պստոյան — Պստեյան - Պստիկյան — Պիճիկյան, Մանրիկյան - Փոքրիկյան - Մուկիկյան - Ծուտիկյան, Կարճիկյան - Կարճյան - Կուլտոյան, Հարմարյան - Ղարուլյան, Մխելյան - Բուբուլյան, Սևակյան - Սևաչերյան - Ղարագոզյան, ինչպես նաև միևնույն ազգանվան

տարբեր տառադարձությունները՝ Չիլոյան -Չիլյան—Չիլիյան -Չիլիկյան, Չոլախյան -Չոլագյան-Չոլաքյան -Չոլակյան, Քոսյան-Քյոսյան -Քեսեյան, Քեսայան- Քոսայան:

Այս խմբի ազգանուններում նկատելի տեղ են զբաղեցնում սըզ(ան+)
թուրքական ածանցով ազգանունները՝ Դերեմսզյան, Դիլսզյան, էմիկ-
սըզյան, Կանսղյան, Ղոնախսզյան, Ճիվսզյան, Պարմաղսզյան, Քեֆնի-
սըզյան և այլն: Չմտնելով ավելորդ մանրամասնությունների մեջ, մի
քանի օրինակներ բերենք այս խմբի հիմնական ենթախմբերից՝

1. Կրողի* արտաքինի հետ կապված ազգանուններ՝ Զարղանգյան,
Թաքբեխյան, Թաքմազյան, Թոփալյան, Թոփմանուկյան (ամենայն
հավանականությամբ թարգմանություն է Բողոզլանյան ձևի), Կոնդյան,
Խորոտյան, Մաղկերեսյան, Շիմշատյան և այլն, ավելի քան 150 ազգա-
նուն:

2. Կրողի բնավորության կամ ներքին որևէ այլ հատկանիշի հետ
կապված ազգանուններ՝ Ախմախյան, Աղվեսյան, Ախքաշյան, Անճարակ-
յան, Դանդաղյան, Դմբոյան, Զալումյան, Թամբալյան, Թավաքալյան,
Թափտուղյան, Կախարդյան, Կոկիկյան, Հրեշտակյան, Ճարահատյան,
Ճարտարյան, Շասախոսյան, Զոմարդյան, Ումրշատյան, Նաղդյան, Մե-
ղավորյան, Անմեղիկյան և այլն:

Այս խմբի մեջ պետք է դասվեն նաև այն ազգանունները, որոնք
վերջին հաշվով կապվել են կրողի սոցիալական դրության հետ՝ Աղքատ-
յան, Բոբիկյան, Եթիմյան, Համալյան, Ղուլյան, Ճարահատյան, Զփախ-
յան: Սրանք բավականին փոքրաթիվ են և սահմանափակ տարածում
ունեն:

Նշենք հետևյալը. դիտարկումները թույլ են տալիս պնդելու, որ
ազգանունների ձևավորման և հետագա կարգավորման ու միօրինակա-
նացման համար խիստ կարևոր է այն միջավայրը, որտեղ նրանք գոր-
ծածվում են: Այսպես օրինակ՝ վերը բերված խիստ բացասական իմաս-
տով ազգանունները հայերի զանգվածային միջավայրում իրենց արտա-
քին անհարմարության պատճառով աստիճանաբար դուրս են եկել գոր-
ծածությունից, մինչդեռ այլալեզու միջավայրում գտնվող հայերը պահ-
պանել են դրանք: Մի այլ օրինակ ևս. անցյալ դարի 70—80-ական թմա-
կաններից սկսած —յանց-ով ձևը աստիճանաբար իր տեղը զիջում էր
—յան-ով ձևին և օրինաչափ ու կանոնական դարձան այդ ածանցով
կազմված ազգանունները, մինչդեռ մինչև օրս Հյուսիսային Կովկա-
սում, Միջին Ասիայում և այլուր ապրող արևելահայերի փոքրաթիվ
խմբերի մոտ բավականին տարածված են —յանց-ով կազմված ազգա-

* Պեռք է հասկանալ պատմականորեն:

նունները, այլ կերպ ասած այդ տարածքներում հայոց ազգանունների կանոնականացում գրեթե չի նկատվում:

Հայոց ազգանունների շարքում տեղանվանական ծագում ունեցողները բավականին բազմազան են, չնայած՝ փոքրաքանակ (մոտ 230), Այստեղ, ի դեպ, չենք դիտարկում այնպիսի նորակազմություններ, հն. պիսիք են Ամբերիկյան և Աֆրիկյան ազգանունները, որոնք միևնույն ժամանակ սխալ ստուգաբանության արդյունք են: Առաջինը ոչ մի կապ չունի հայտնի մայրցամաքի հետ և կապվում է Ամերիկ անձնանվան հետ, իսկ վերջինս իր հերթին՝ ամուր-Ամերիկ մականվան հետ: Ինչ վերաբերում է Աֆրիկյան ազգանվանը, ապա այն պետք է կապել էփրիկյանի հետ փ>ֆ տառադարձությամբ. էփրիկյանի հիմքում ընկած է էփրաիմի, էփրիկ փաղաքական ձևը (հմմ. Հր. Աճառյան, Անձնանունների բառարան, հ. Բ):

Տեղանվանական ծագում ունեցող ազգանունները իրենց բառակազմությամբ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Դրանց որոշ մասում պահպանվում է տեղանվանական -ացի, -եցի ածանցները-աց, -եց, և -ց տարբերակներով՝ Աստաբացյան, Ախցխեցյան, Արզրումցյան, Բասենցյան, Բինգյուցյան, Գյուլեցյան, Գյանջեցյան, Զարացյան, Զելթունցյան, Լոռեցյան, Խակեցյան, Խոյեցյան- Խոյցյան, Կաղղվանցյան, Կարենցյան, Կարսեցյան, Հաջնցյան, Ղազախեցյան, Ղարաբաղցյան, Ղափանցյան, Մոկացյան-Մակասյան, Մակվեցյան, Մշեցյան, Մուղնեցյան, Վաղիգեղցյան, Օզնեցյան, Օղոմցյան, Քեթցյան և այլն:

Տեղանվանական ծագում ունեցողների մի այլ մասը, արդեն վերը ներկայացված օրինաչափությամբ, գործածված է առանց ածանցի: Ալաշկերտյան, Ամասյան, Անթապյան, Բագիշյան, Լուլուկյան, Բագրեանյան, Բիթլիսյան, Բոնակոթյան, Դաղստանյան, Ծրնջական, Ծրեանյան, Զանգիզորյան, Թալիշյան Թիֆլիսյան, Խասպախյան, Խարբերդյան, Խորասանյան, Կարճևանյան, Կիլիկյան, Կողեսյան, Կողմանյան, Ղոնգաղսազյան, Ճապազդուրյան, Ճորոխյան, Նովշատյան, Նորջուղյան, Մանանդյան, Մարաշյան, Մուավյան, Շարուրյան, Շահնաբաթյան, Շամքորյան, Շիրազյան, Շիրակյան, Շաբաբխանյան, Չանախյան, Չերեմա-մորյան, Չերքեղյան, Չինչինյան, Չավախյան, Սոլուկյան, Սվասյան-Սվազլյան, Տաթևյան, Տարոնյան, Տրապիզոնյան, Փարվանյան, Ուրֆայան, Օձունյան և այլն:

Եվ, վերջապես, երրորդ խումբը, որի մեջ մտնում են զուգահեռ՝ ածանցով և առանց ածանցի գործածվող ազգանունները՝ Աբուլյան-Աբուցյան, Ալվարյան- Ալվրցյան- Ալվարցյան, Աստաբացյան -Աստաբատյան, Բաղեշցյան -Բախշեցյան -Բաղեշյան, Բայազատցյան- Բայազետյան, Գյանջեցյան-Գյանջյան, Երզնկացյան- Երզնկյան, Թոխաթցյան-Թոխատյան, Ղարսեցյան-Կարսյան, Կոշեցյան-Կոշյան, Ղազա-

խեցյան-Ղաղախյան, Զահուկյան-Զահուկցյան-Զավուկցյան, Շատախցյան- Շատախյան, Սասունցյան- Սասունյան, Ստամբուլցյան-Ստամբուլյան, Սևանցյան- Սևանյան, Քափանակցյան- Քափանակյան- Քեփե-նեկյան, Քեսաբցյան- Քեսաբյան և այլն:

Տեղանվանական ծագում ունեցող ազգանունների մեջ հատուկ տեղ են զբաղեցնում մի կողմից Բնիկյան, մյուս կողմից Աճամօղլյան, Ախպարյան, Աճեմյան, Ղզլբաշյան, Պանդուխտյան, Կոռյան, Նորեկյան, էլլարարյան, Յաղոյան, էլօղլյան, ինչպես նաև Վրացյան, Գյուրջիյան, Գյուրջինյան, Գյուրջյան, Օսմանյան, Ֆռանկյան և լեմենցյան ազգանունները: Այս ազգանունները որևէ կոնկրետ տեղանվան հետ չեն կապվում, բայց, այնուամենայնիվ, հարկ ենք համարել տեղավորել այս խմբի մեջ, քանի որ վերջիններս այս կամ այն կերպ ցույց են տվել ազգանունը կրողի և, ամենալայն առումով, որոշ տարածքի հարաբերություն: Բնիկյան ազգանունը իր իմաստով հակադրվում է նախորդ բոլորին: Ըստ երևույթին նման անուն տրվել է գլխավորապես այն դեպքերում, երբ որևէ վայրում եկվորները ավելի շատ են եղել և իրենցից տարբերելու համար մյուսներին տվել են այդ հորջորջումը: Իր իմաստով այդ անվանը անմիջականորեն հակադրվում է Նոբեկյանը, իսկ մյուսները այս կամ այն կերպ իրենց իմաստով մոտենում են վերջինիս: Պետք է ենթադրել, որ Աճեմյան և Ղզլբաշյան ազգանունները կարող էին ստանալ հիմնականում պարսկահայեր:

Էլլարյան, Յաղոյան, էլօղլյան ազգանունները ստեղծվել են դրսից եկածներին՝ ներգաղթածներին տարբերելու համար և քանի որ սրանց մեջ բացասական իմաստը բավական ցայտուն է, ուստի, ինչպես և կարելի էր սպասել, ընդգրկման ոլորտը շատ սահմանափակ է: Իմաստով Աճեմյան և Ղզլբաշյան ազգանուններին մոտ են Վրացյան, Գյուրջյան, Գյուրջինյան, Օսմանյան, Ֆռանկյան և լեմենցյան ազգանունները: Ըստ երևույթին Գյուրջյան, Գյուրջինյան ազգանունները տրվել են վիրահայոց թուրք պարսկական միջավայրում: Մի քանի խոսք լեմենցյան ազգանվան մասին: Այն, անկասկած, կապվում է ցեմեց-լեմեց-լեմե-սեռ (օտարազգի-եկվոր) ընդհանուր իմաստի հետ: Մինչև վերջերս Հյուսիսարևելյան Հայաստանում բնակվող ժերուհիները Կովկասում գոյություն ունեցող փոքրաթիվ օտարազգիների (հատկապես գերմանացիների) գաղութները կոչում են լեմենցներ՝ օր.՝ քյնացել ա լեմենցները:

Ծվ, վերջապես, մի քանի խոսք էլ Կեղացյան, Քաղկցյան, Սարիկյան, Սառիկյան, Սարատակյան (Սարատիկյան) և Սարեցյան ազգանունների մասին: Սրանք նույնպես, ինչպես և նախորդները, կոնկրետ աշխարհագրական տեղանվան հետ չեն կապվում, բայց ցույց են տալիս ազգանունը կրողի կապը որևէ վայրի հետ և իրենց իմաստով ինչ-որ տեղ մոտենում են մականվանական ծագում ունեցող ազգանուններին: